Համաձայնագիր-3
21.02.2019թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան

«13» դեկտեմբերի 2019թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Փայլք» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Հ. Խանաղյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 21.02.2019թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ծառայության մատուցման ժամկետը (վերջնաժամկետը) երկարաձգել՝ այն սահմանելով մինչև 2020 թվականի հունվարի 14-ը:

1.2. Սույն համաձայնագրով ավելացված ժամանակահատվածի համար մատուցվելիք ծառայությունների դիմաց 2020 թ. կհատկացվեն համապատասխան ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Փայլք» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14
ՀՎՀՀ 02647057	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013202016, Հ/Հ 900013574018	Հ/Հ 220143330235000
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 06948686
գործառնական վարչություն	Տնօրեն
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____	Հ. Խանաղյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/ Կ.Տ/